ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հավելված № 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ Վարչության նախագահի
2025 թվականի փետրվարի 24-ի N 22-Լ կարգադրությամբ

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ «ՊՐՈՖԻ» ԵՎ «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ» ՎԱՐԿԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանում	Իրավաբանական վարչություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	24/03/2025
Տարածումը	Բանկի բոլոր ստորաբաժանումներ
Այլ դրույթներ	Ուժը կորցրած ճանաչել վարչության նախագահի 2024 թվականի նոյեմբերի 22-ի № 161-Լ կարգադրությունը
Առնչվող փաստաթղթեր	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 3
2. ՎԱՐԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ 4
3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 12
4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 13
5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ 14
6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ 15
7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 15

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. ***«Ակցեպտ»***՝ Պայմանագիր կնքելու նպատակով Վարկառուի/Երաշխավորի կողմից ներկայացված Օֆերտան ակցեպտավորելու (ընդունելու) վերաբերյալ Բանկի կողմից տրամադրված հավաստում, որը Օֆերտայի հետ միասին կազմում է Պայմանագիր,
2. ***«Բանկ»***՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ (սույն կանոններում և Պայմանագրում կարող է կիրառվել նաև «Վարկատու» տերմինը),
3. ***«Ուսանողական վարկ»***՝ Բանկի կողմից սահմանված վարկատեսակ, որը տրամադրվում է ուսանողներին ուսումնական վարձը վճարելու նպատակով,
4. ***«Պրոֆի վարկ»***՝ Բանկի կողմից սահմանված վարկատեսակ, որը տրամադրվում է, այն ֆիզիկական անձանց, ովքեր աշխատավարձը ստանում են կամ նախատեսում են ստանալ Բանկում քարտի տրամադրումից հետո առավելագույնը մեկ ամսվա ընթացքում՝ անկախ կազմակերպության հետ համագործակցության պայմանագրի առկայությունից և կազմակերպության տեսակից:
5. ***«Պրոֆի վարկային գիծ»***՝Բանկի կողմից սահմանված վարկային գծի տեսակ, որը տրամադրվում է, այն ֆիզիկական անձանց, ովքեր աշխատավարձը ստանում են կամ նախատեսում են ստանալ Բանկում քարտի տրամադրումից հետո առավելագույնը մեկ ամսվա ընթացքում՝ անկախ կազմակերպության հետ համագործակցության պայմանագրի առկայությունից և կազմակերպության տեսակից:
6. ***«Երաշխավոր»***՝ Ուսանողական վարկի շրջանակներում երաշխավորության պայմանագիր կնքած անձ,
7. ***«Կողմեր»***՝ Պայմանագրի կողմերը՝ Բանկը և Վարկառուն միասին, իսկ Ուսանողական վարկատեսակի շրջանակներում տրամադրվող վարկատեսակի դեպքում նաև Երաշխավոր,
8. ***«Պայմանագիր»***՝Բանկի և Վարկառուի միջև սույն կանոնների պահպանմամբ կնքված վարկային պայմանագիր, որը կնքվում է Վարկառուի կողմից ներկայացված Օֆերտայի Բանկի կողմից ակցեպտավորմամբ, իսկ Ուսանողական վարկի դեպքում նաև՝ Բանկի, Վարկառուի և Երաշխավորի միջև կնքված վարկային և երաշխավորության խառը պայմանագիրը, որը կնքվում է Վարկառուի և Երաշխավորի կողմից համատեղ տրված Օֆերտայի ակցեպտավորմամբ:
9. ***«Վարկ»***՝ Պայմանագրի հիման վրա Ուսանողական վարկի, Պրոֆի վարկի, Պրոֆի վարկային գծի շրջանակներում Վարկառուին տրամադրվող սպառողական վարկ
10. ***«Վարկային հաշիվ»***՝ Վարկի տրամադրման և հաշվառման նպատակով Բանկի կողմից Վարկառուի անունով բացվող կամ արդեն բացված հաշիվ,
11. ***«Վարկառու»***՝Բանկի հետ Պայմանագիր կնքած կամ այն կնքելու մտադրություն հայտնած անձ, այդ թվում՝ Օֆերտա ներկայացրած անձ, որին տրամադրվելու է կամ տրամադրվել է Վարկը,
12. ***«Վարկավորման պայմաններ»***՝ Բանկի կողմից հաստատված և հրապարակված վարկի տրամադրման և սպասարկման պայմաններ, այդ թվում՝ փաթեթներ և դրանց փոփոխություններ (տեղեկատվական ամփոփագրեր): Համապատասխան վարկատեսակի Վարկավորման պայմանները հանդիսանում են կնքված Պայմանագրի անբաժանելի մաս,
13. ***«Օֆերտա»***՝Պայմանագիր կնքելու համար Վարկառուի կողմից ներկայացված՝ Վարկ ստանալու վերաբերյալ դիմում, որը Բանկի կողմից ակցեպտավորվելով՝ Բանկի և օֆերտա ներկայացրած անձի միջև ծագում են պայմանագրային իրավահարաբերություններ, իսկ Ուսանողական վարկի

դեպքում նաև Երաշխավորի կողմից երաշխավորություն տրամադրելու դիմում, որը Բանկի կողմից ակցեպտավորմամբ ծագում են երաշխավորության իրավահարաբերություններ:

2. ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

14. Պայմանագրի կնքման կարգ և վարկի սպասարկման պայմաններ

1) Պայմանագրի կողմ հանդիսացող Վարկառուն Բանկին ներկայացնում է Օֆերտա՝ վարկ ստանալու նպատակով: Բանկի կողմից Վարկի տրամադրման ակցեպտը /այդ թվում՝ դրան կից և անբաժանելի հավելվածները/ ուղարկվում է Վարկառուի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին, ընդ որում՝ ակցեպտը ստանալու պահից օֆերտան համարվում է պատշաճ ակցեպտավորված, և Պայմանագիրը՝ կնքված:
2) Եթե Բանկի կողմից տրամադրված Վարկի տրամադրման ակցեպտի պայմանները տարբերվում են Օֆերտայով ներկայացված վարկի պայմաններից, ապա այն հանդիսանում է նոր օֆերտա (որը ներառում է Վարկառուի կողմից ներկայացված Օֆերտան սույն Ակցեպտին չհակասող մասով), որը համարվում է Վարկառուի կողմից ակցեպտավորված, և նոր պայմաններով Վարկի տրամադրման պայմանագիրը՝ կնքված, Վարկառուի կողմից Ակցեպտը ստանալու օրը իր հաշվին փոխանցված Վարկի գումարը կամ դրա մի մասը օգտագործելու կամ Բանկի կողմից Ակցեպտն ուղարկած էլեկտրոնային փոստի հասցեին Վարկի տրամադրման ակցեպտից հրաժարվելու վերաբերյալ չտեղեկացնելու դեպքում: Ընդ որում, Վարկառուն վերոնշյալ եղանակով արտահայտում է իր կամքը՝ ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 294-րդ հոդվածի 3-րդ մասով: Հակառակ դեպքում՝ Պայմանագիրը համարվում է չկնքված: Սույն կետով սահմանված կարգով կնքված Պայմանագիրը ներառում է Վարկառուի ներկայացրած Օֆերտան, Ակցեպտը, սույն կանոնները և համապատասխան վարկատեսակի Վարկավորման պայմանները, իսկ Վարկավորման պայմաններով կամ սույն կանոններով նախատեսված լինելու դեպքում նաև այլ փաստաթղթեր:
3) Վարկի տրամադրման ակցեպտը ուղարկելուց հետո նույն օրը Վարկը տրամադրվում է Վարկառուի վարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վարկի տրամադրման ամսաթիվ է հանդիսանում Վարկառուի Վարկային հաշվին փոխանցված գումարի արտացոլման ամսաթիվը:
4) Պայմանագրով Բանկը Վարկառուին տրամադրում է Վարկ, իսկ Վարկառուն պարտավորվում է Պայմանագրով սահմանված պայմաններով վերադարձնել Վարկը և տոկոսներ վճարել դրա դիմաց, վճարել Վարկավորման պայմաններով սահմանված այլ վճարումները և կատարել կնքվող Պայմանագրից բխող այլ պարտավորություններ:
5) Վարկի օգտագործման համար տոկոսների հաշվարկումը (կուտակումը) իրականացվում է յուրաքանչյուր օր՝ սկսած Վարկի տրամադրման օրվանից, Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ, իսկ սահմանված տոկոսադրույքը կարող է փոփոխվել սույն կանոններով կամ Պայմանագրով սահմանված կարգով: Ընդ որում՝ ժամկետանց պարտքի առկայության դեպքում տոկոսագումարների հաշվարկը շարունակվում է մինչև Վարկի մարման վերջնաժամկետը, իսկ Վարկի մարման վերջնաժամկետից հետո Վարկի փաստացի մնացորդի նկատմամբ հաշվարկվում են տոկոսներ՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված տոկոսադրույքը հոդվածի:

6) Վարկի օգտագործման համար սահմանված փաստացի տոկոսադրույքի հաշվարկի մեջ ներառվում են՝ վարկավորման նպատակով Վարկառուի կողմից կատարված ծախսերը: Նշված հաշվարկի օրինակը հրապարակված է Բանկի www.idbank.am ինտերնետային կայքում: Վարկառուն սույն կանոններին համաձայնություն տալով հավաստում է, որ ծանոթացել է դրան և այն իր համար ամբողջությամբ ընդունելի է:
7) Վարկի և հաշվարկված տոկոսագումարների մարումը կատարվում է համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող ժամանակացույցի, բացառությամբ Պրոֆի վարկային գծերի, որոնց դեպքում Վարկառուն պարտավոր է Պրոֆի վարկային գծից ստացված հերթական վարկի դիմաց կատարել ընթացիկ մարում՝ ամենամսյա պարտադիր մուտք քարտային հաշվին՝ նախորդ ամսվա վերջին օրվա դրությամբ օգտագործված գումարի՝ Պայմանագրով սահմանված տոկոսի և պարտադիր վճարման ենթակա այլ գումարների (հաշվեգրված տոկոսներ, տույժեր, դեբիտորական պարտք և այլն) հանրագումարի չափով մինչև Պայմանագրով սահմանված ժամկետը: Գումարները համարվում են վճարված դրանք քարտային հաշվին փաստացի մուտքագրվելու պահից:
8) Եթե Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող վարկի մարման ժամանակացույցով նախատեսված վարկի մարման օրը շաբաթ կամ կիրակի է, ապա մարումը համապատասխանաբար կատարվում է այդ օրերին հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային օրը, իսկ եթե մարման օրը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օր է, բացառությամբ սույն կետով նշված օրերի, ապա մարումը կատարվում է հաջորդող աշխատանքային օրը:
9) Պայմանագրից բխող վճարների (դրանց մի մասի), այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ Վարկի գումարի, տոկոսագումարի, այլ վճարների, վճարման կարգը մարման ժամանակացույցով սահմանված լինելու դեպքում, այն հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս, որը Ակցեպտի հետ միասին սույն կանոններով նախատեսված կարգով ուղարկվում է Վարկառուին՝ իր էլեկտրոնային փոստի հասցեին:
10) Վարկառուին տրամադրված վարկի ժամկետայնության և տոկոսների հաշվարկման համար հիմք է ընդունվում տարին 365 օրացուցային օր սկզբունքը:
11) Վարկատուի նկատմամբ ունեցած Պարտավորությունները կատարելիս մարումներն ընդունվում են հետևյալ հերթականությամբ. ա) գումարի հետ վերադարձման համար բանկի կողմից կատարված ծախսեր բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում)[1], բ) տոկոսների տուժանք, գ) վարկի մայր գումարի տուժանք, դ) տոկոսներ, ե) սպասարկման վճար և միջնորդավճարներ (առկայության դեպքում) և զ) վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը: Ընդ որում, Պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում առաջնահերթ մարումներն ընդունվում են ի կատարումն ժամկետանց պարտավորությունների, այնուհետ՝ սույն կետով նախատեսված կարգով՝ ժամանակացույցով նախատեսված Պարտավորությունների մասով:
12) Վարկատուի պահանջը փաստացի բավարարման պահին ներառում է տուժանքն ու վնասները, սպասարկման վճարները և միջնորդավճարները, տոկոսագումարը, վարկի մայր գումարը:

1 Ընդ որում՝ նշված ծախսերը Բանկի կողմից ենթակա են բռնագանձման անկախ ծախսի կատարումից հետո Վարկառուի կամ որևէ երրորդ անձի կողմից կամավոր կերպով հիմնական պարտավորության կատարման հանգամանքից:

13) Վարկի տոկոսադրույքը, միջնորդավճարները կամ սպասարկման վճարների չափերը և սույն պայմաններով նախատեսված պայմանները Վարկատուն կարող է միակողմանիորեն փոփոխել, այդ մասին Վարկառուին 7 (յոթ) աշխատանքային օր առաջ Պայմանագրով ընտրված եղանակով ծանուցելու միջոցով:
14) Վարկի և տոկոսագումարների մարման ժամանակացույցով սահմանված վճարները (դրանց մի մասը) Պայմանագրով սահմանված, Բանկի կողմից միակողմանի փոփոխվելու պարագայում Բանկը գրավոր (Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով) ծանուցում է Վարկառուին՝ կցելով փոփոխված մարման ժամանակացույցը և Վարկառուն անվերապահորեն պարտավորվում է համապատասխան վճարները կատարել համաձայն փոփոխված մարման ժամանակացույցի: Փոփոխված մարման ժամանակացույցը Վարկառուին ուղարկման պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Վարկի տրամադրման Օֆերտան ստորագրելու պահին Վարկառուն տալիս է իր անվերապահ համաձայնությունն առ այն, որ Վարկատուն կարող է սույն պայմաններով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում առանց լրացուցիչ ծանուցման Վարկառուի հաշիվներից անակցեպտ գանձել պարտքի չափին համապատասխան գումար: Տվյալ պարագայում, Վարկատուն անակցեպտ գանձումները կատարում է Պայմանագրով նախատեսված վարկի մարման ժամանակացույցով նախատեսված վճարումները կատարելու բանկային օրվա ավարտին:

Ընդ որում, անակցեպտ գանձվում է այն արժույթի հաշվից, որ արժույթով տրամադրվել է վարկը, իսկ դրանում միջոցների բացակայության դեպքում՝ այլ արժութային հաշվից Բանկի ընտրությամբ:

15) Վարկառուն, Պրոֆի վարկային գիծ ստանալու համար Օֆերտան ստորագրելով, տալիս է նաև իր համաձայնությունն առ այն, որ Վարկատուն իրավունք ունի դադարեցնել Պրոֆի վարկային գծի չօգտագործված մասի օգտագործման Վարկառուի իրավունքը՝ դրա մասին (դադարեցման պահից) 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով տեղեկացնելով Վարկառուին, եթե

ա.Պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի փոխարժեքի ավելի քան 5 (հինգ) տոկոսով տատանման և/կամ սույն պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված լոմբարդային ռեպո տոկոսադրույքի ավելի քան 3 (երեք) տոկոսով տատանման դեպքում,

բ.Բանկի կողմից հրապարակված լողացող տոկոսադրույքի հիմքում օգտագործվող հրապարակային բազային տոկոսադրույքի՝ մեկ տարվա ընթացքում ավելի քան 2 (երկու) տոկոսային կետով տատանման դեպքում,

գ.Պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ՌԴ ռուբլու փոխարժեքի ավելի քան 20 (քսան) տոկոսով տատանման դեպքում,

դ.Պայմանագրի կնքման պահի համեմատ միջազգային շուկայում նավթի (BRENT) և ոսկու հրապարակվող գների ավելի քան 20 (քսան) տոկոսով տատանման դեպքում,

ե.ՀՀ բացասական ՀՆԱ հրապարակման դեպքում,

զ .ՀՀ ԿԲ կողմից ՀՀ որևէ առևտրային բանկի լիցենզիայի հետ կանչման դեպքում,

է.ՀՀ գործազրկության հրապարակվող ցուցանիշի ավելի քան 10 (տասը) տոկոսով աճի դեպքում,

ը.Արտերկրից ՀՀ կատարվող դրամական փոխանցումների հրապարակվող ցուցանիշի ավելի քան 10 (տասը) տոկոսով նվազման դեպքում,

թ.ՀՀ կամ հարևան երկրում/տարածքներում պատերազմի հայտարարման կամ պատերազմական գործողությունների դեպքում,
ժ.ՀՀ կողմից արտակարգ դրության հայտարարման դեպքում,
ժա .ՀՀ-ում արտահերթ խորհրդարանական ընտրությունների նշանակման դեպքում,
ժբ.Վարկառուին սնանկ ճանաչելու դիմում (հարկադիր կամ կամավոր) ներկայացվելու դեպքում
ժգ.Վարկառուի կողմից ինքնասնանկության հայտ ներկայացնելու դեպքում,
ժդ.Որևէ քրեական գործում Վարկառուի որպես մեղադրյալ ներգրավվելու դեպքում և/կամ նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցված լինելու դեպքում,
ժե.Վարկառուի նկատմամբ 1 մլն ՀՀ դրամը գերազանցող գումարի բռնագանձման պահանջի բավարարման դեպքում
ժզ.Վարկառուին ազատազրկման հետ կապված դատավճռի կայացման դեպքում դատական կարգով քրեական կամ քաղաքացիական օրենսգրքով մեղավոր ճանաչելու դեպքում, որի արդյունքում պահանջը կգերազանցի 1 մլն ՀՀ դրամը, կամ առկա կլինի ազատազրկման որոշում,
ժէ.Փողերի լվացման տիպաբանություններով գործարքների իրականացման կամ փողերի լվացման ցուցակներում հայտնվելու դեպքում,
ժը.Ընդհանուր մակրոտնտեսական վիճակի վատթարացման դեպքում,
ժթ.Վարկատուի կողմից իրականացվող մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հայտնաբերման դեպքում,
ի.Այն դեպքում, երբ Վարկատուին չի հաջողվում տվյալների թարմացման կամ այլ նպատակով Վարկառուի հետ կապ հաստատել հեռախոսակապի միջոցով՝ վերջինիս կողմից տրամադրված հեռախոսահամարով:

16) Վարկառուն նաև համաձայնվում է, որ 14-րդ կետի 15-րդ ենթակետով նախատեսված պայմանների վերացումը չի կարող հիմք հանդիսանալ վարկային գծի չօգտագործված մասի օգտագործման Վարկառուի իրավունքը վերականգնելու համար, բացառությամբ 14-րդ կետի 15-րդ ենթակետի ի) ենթակետով նախատեսված հիմքով վարկային գծի չօգտագործված մասի օգտագործման սահմանափակման դեպքի, երբ Վարկառուի կապի դուրս գալու արդյունքում ապահովվի վերջինիս տվյալների թարմացումը (այդ թվում՝ նոր գործող հեռախոսահամարի տրամադրումը) կամ այն նպատակի իրականացումը, ինչի համար Վարկատուն փորձել է կապ հաստատել Վարկառուի հետ:
17) Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխելու Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը /բարձրացնելով այն մինչև ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի կրկնապատիկը սույն կանոնների 14-րդ կետի 15 ենթակետով նախատեսված դեպքերում՝ Վարկառուին նախօրոք 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցելով (Վարկառուի կողմից ընտրված հաղորդակցման եղանակով):
18) Սույն կանոններին համաձայնություն տալով՝ Վարկառուն ընդունում է, որ գիտակցում և հասկանում է սույն կանոնների 14-րդ կետի 15-րդ և 16-րդ ենթակետերով Պրոֆի վարկային գծի օգտագործման հնարավորության դադարեցման, ինչպես նաև վարկի տարեկան անվանական տոկոսադրույքի փոփոխության պայմանները և հետևանքները, ինչպես նաև դրանց կիրառման վերաբերյալ տալիս է իր անվերապահ համաձայնությունը:
19) Պրոֆի վարկային գծի տրամադրման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքը և ընդհանուր ծախսը հաշվարկված են Պայմանագրի կնքման օրվա դրությամբ, կրում են կողմնորոշող բնույթ և կարող են Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխվել՝ կապված օգտագործված գումարները և տոկոսները Վարկառուի

կողմից վճարման արտոնյալ ժամանակահատվածում մարելու, ինչպես նաև դրա հաշվարկում ներառված տարրերի փոփոխությունից:

15. Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավունք ունի՝

1) Պայմանագրի գործողության ընթացքում հսկողություն սահմանել Վարկառուի բոլոր հաշիվների և դրամական այլ միջոցների նկատմամբ:
2) Պայմանագրով նախատեսված մարման օրվա վերջում և հետագա ժամկետանց օրերին, Վարկատուի մոտ բացված Վարկառուի կամ Վարկառուի կողմից նշված երրորդ անձանց (վերջինիս գրավոր համաձայնության դեպքում) հաշիվներից անակցեպտ գանձել դրամական միջոցները և կատարել Պարտքի մարումներ: Արտարժութային դրամական միջոցների՝ տվյալ օրվա դրությամբ Վարկատուի կողմից սահմանված փոխարժեքով:
3) Վարկառուի կողմից Պայմանագրի կամ սույն կանոնների որևէ դրույթի խախտման, Պայմանագրով նախատեսված ժամկետներում Վարկառուի կողմից պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու, ինչպես նաև Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հայտնաբերման դեպքում ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված բոլոր անհրաժեշտ գործողությունները (հաշիվներից անակցեպտ բռնագանձում, գրավի առարկայի իրացում, հետագա վարկավորման դադարեցում, Վարկի ամբողջ գումարի վաղաժամկետ մարման պահանջի ներկայացում և այլն)՝ Վարկառուի պարտականությունների կատարումն ապահովելու համար:
4) Վարկը նպատակային տրամադրվելու դեպքում Վարկառուից պահանջել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը վարկի նպատակային օգտագործման, ֆինանսական վիճակի և վճարունակության վերաբերյալ:
5) Պայմանագրի գործողության ընթացքում պարբերաբար, իրականացնել Վարկառուի վերաբերյալ տեղեկատվության թարմացում, անհրաժեշտության դեպքում՝ վեցամսյա կամ իր կողմից որոշված այլ պարբերականությամբ, Վարկառուից պահանջել ներկայացնել համապատասխան փաստաթղթեր և տվյալներ:
6) Վարկառուի կողմից Պարտավորությունները ժամանակին չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտությունից ելնելով՝ օրենքով սահմանված կարգով դատարանին տրամադրել Վարկառուի հաշիվների վերաբերյալ տեղեկություններ:
7) Պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին, «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» փակ բաժնետիրական ընկերության վարկային բյուրոյին և իրավասու այլ պետական և ոչ պետական մարմիններին տրամադրել և ստանալ Վարկառուի պարտավորությունների և վարկառուի վերաբերյալ այլ տեղեկություններ, վարկային զեկույց:
8) ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 (ԵՐԵՔ) ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԴ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ:
9) Վարկառուից Պայմանագրի գործողության ընթացքում պահանջել տրամադրել լրացուցիչ փաստաթղթեր, այդ թվում բայց ոչ միայն, վարկունակության և վարկարժանության գնահատման համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, և այլն,

10) Պայմանագրի հիման վրա իրեն պատկանող իրավունքը (պահանջը) առանց Վարկառուի համաձայնության գործարքով փոխանցել (զիջել) այլ անձի: Վարկառուն սույնով հավաստում է, որ սույն կանոնների կիրառմամբ վարկավորման դեպքում Վարկատուի անձն իր համար որևէ նշանակություն չունի,
11) Վարկառուից պահանջել Պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարում,
12) Վարկը նպատակային լինելու դեպքում իր բացառիկ հայեցողությամբ գնահատել Վարկի նպատակային օգտագործումը,
13) Իրականացնել մոնիթորինգ՝ Վարկառուի վարկունակության աստիճանի, Վարկառուի՝ 17-րդ կետով սահմանված պարտավորությունների նկատմամբ.
14) Ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել Վարկ տրամադրելուց և (կամ) ներկայացնել Պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջ, եթե տեղի են ունեցել փոփոխություններ կամ հայտնի են դարձել տվյալներ, որոնց առկայությունը Բանկի գնահատմամբ ազդում է վարկունակության վրա կամ կասկածի տակ է դնում վարկի հետագա սպասարկումը,
15) Կասեցնել Պրոֆի վարկային գծի օգտագործման Վարկառուի իրավունքը՝ դրա մասին (կասեցման պահից) 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով տեղեկացնելով Վարկառուին, եթե առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտ վկայում են, որ Վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի և/կամ Վարկառուն ունի կետանցված պարտավորություններ և/կամ Վարկառուի գույքի վրա արգելանք է դրված,
16) Վերացնել կամ մասնակի վերացնել վարկային գծի օգտագործման Վարկառուի իրավունքի կասեցումը, եթե Վարկառուն Վարկատուին է ներկայացնում Պրոֆի վարկային գծի սպասարկման հնարավորության վերաբերյալ՝ Վարկատուի համար ընդունելի, հիմնավոր ֆինանսական և այլ փաստաթղթեր, առկա չէ վճարման ենթակա Պարտքի գումար և Վարկառուն չունի կետանցված պարտավորություններ,

16. Պայմանագրի գործողության ընթացքում Վարկատուն պարտավորվում է՝

1) Վարկի ձևակերպումներն իրականացնել Պայմանագրի պայմաններին համապատասխան, ժամանակին և սահմանված կարգով հաշվառում տանել վարկի շարժի, մարումների, տոկոսագումարների հաշվառման վերաբերյալ, Վարկառուի պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ:
2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել Պայմանագրի գաղտնիությունը:
3) Ոչ պակաս, քան երեսնօրյա պարբերականությամբ, Վարկառուին ներկայացնել «Սպառողական Կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված պարտադիր ներկայացման տեղեկատվությունը, այսուհետ՝ «Պարտադիր ներկայացման տեղեկատվություն», Վարկառուի նախընտրած եղանակով: (*գործում է մինչև 15,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում)*

17. Պայմանագրի գործողության ընթացքում Վարկառուն իրավունք ունի՝

1) Իր նախաձեռնությամբ Պայմանագրի մասը հանդիսացող Վարկի և այլ վճարումների մարման ժամանակացույցով սահմանված ժամկետներից շուտ մասնակի կամ ամբողջությամբ մարել վարկը և դրա դիմաց հաշվարկված փաստացի տոկոսագումարը:

2) Վարկատուից ստանալ տեղեկանք վարկի շարժի մասին՝ Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարը վճարելու դեպքում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված Վարկառուին պարտադիր տրամադրման տեղեկատվության:
3) Առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծել Պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են Պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: (կիրառելի է մինչև 15 մլն ՀՀ դրամ վարկերի դեպքում)
4) ժամկետից շուտ լրիվ կամ մասնակի մարել Վարկը, փաստացի մարման օրվա դրությամբ հաշվեգրված Տոկոսագումարը, ինչպես նաև Պայմանագրով նախատեսված այլ պարտադիր վճարումները: *ժամկետից շուտ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու (մարելու), ինչպես նաև վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է Վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսը և Վարկառուի նկատմամբ չի կարող կիրառվել պատասխանատվության միջոցներ (տուժանք կամ Վարկառուի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոց): Վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսից համամասնորեն նվազեցման ենթակա են ապահովագրական վճարները, հաշվի բացման, քարտի տարեկան սպասարկման, վարկի տրամադրման միանվագ, վարկի կանխիկացման, վարկի սպասարկման ամսական վճարները, իսկ ենթակա չեն հետևյալ ծախսերը՝ հայտի ուսումնասիրման: (գործում է 15,000,000 ՀՀ դրամ վարկերի դեպքում)*

18. Պայմանագրի գործողության ընթացքում Վարկառուն պարտավորվում է՝
1) Պայմանագրին համապատասխան և նշված ժամկետներում վերադարձնել Վարկը և վճարել տոկոսները և վարկավորման պայմաններով սահմանված միջնորդավճարներն ու վճարման ենթակա այլ գումարները,
2) Չկատարել որևէ գործողություն՝ այդ թվում վարկային, երաշխիքային և այլ պարտավորությունների ստանձնում, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վրա:
3) Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու դեպքում Բանկի պահանջով վերջինիս վճարել Պայմանագրով նախատեսված տուժանքը (տույժ և տուգանք) և դրամական պարտավորությունների խախտման համար տոկոսները,
4) Անմիջապես տեղեկացնել Բանկին Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների ցանկացած խախտման, ինչպես նաև հանգամանքների էական փոփոխությունների մասին,
5) Պայմանագրով ստանձնած պարտավորությունները վաղաժամկետ կատարելու մասին գրավոր պահանջն ստանալուց հետո սահմանված կարգով և ժամկետում վաղաժամկետ ու ամբողջությամբ կատարել պարտավորությունները,
6) Իրականացնել Պայմանագրով սահմանված այլ պարտավորությունները:
7) Բոլոր այն դեպքերում, երբ Բանկի կողմից Պայմանագրին համապատասխան միակողմանիորեն փոփոխվում է որևէ պայման, իսկ Վարկառուն համաձայն չէ փոփոխված պայմանին, վերջինս իրավունք ունի վաղաժամկետ մարել (վերադարձնել) Վարկը:
8) Չփոխանցել պայմանագրերով ստանձնած պարտքը կամ դրա մի մասն այլ անձի առանց Բանկի գրավոր համաձայնության:
9) Անհապաղ տեղեկացնել Վարկատուին այլ անձանց կողմից իր հանդեպ հարուցված անվճարունակության (սնանկացման) և/կամ այլ քաղաքացիական և/կամ քրեական գործերի վերաբերյալ,

10) Հասցեի, անձնագրային տվյալների, կապի միջոցների և այլ էական վավերապայմանների փոփոխման դեպքում, անմիջապես գրավոր ձևով տեղեկացնել Վարկատուին՝ առկայության դեպքում կցելով փոփոխությունը հավաստող փաստաթղթի պատճենը,
11) Վարկառուի, ինչպես նաև նրա հետ փոխկապակցված անձանց կողմից վարկային, երաշխիքային և այլ պարտավորություններ ստանձնելուց առաջ գրավոր տեղյակ պահել Վարկատուին:

19. Վարկի տրամադրման մերժում, Պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջ և տոկոսադրույքի միակողմանի փոփոխում.

1) Բանկն իր հայեցողությամբ կարող է պահանջել պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում (այդ թվում, բայց ոչ միայն, տոկոսները, տուժանքը (տույժ և տուգանք), մերժել վարկի տրամադրումը, ինչպես նաև միակողմանիորեն փոփոխել Վարկի տոկոսադրույքը, եթե՝

ա.Վարկառուն չի կատարել կամ անպատշաճ է կատարել Պայմանագրից բխող պարտավորությունները, ներառյալ, բայց չսահմանափակելով սահմանված ժամկետում չի վերադարձնում Վարկի գումարը և(կամ) չի վճարում Տոկոսները, սպասարկման վճարները, տուժանքը և(կամ) այդ կետանցները/ուշացումները կրում են պարբերական բնույթ, կամ Բանկի ծանուցման պահանջները կամ օրենքով սահմանված ցանկացած այլ պարտավորություն, կամ

բ.Առկա է որևէ դատական կամ իրավական այլ գործընթացը կամ իրադրության այլ փոփոխությունը հիմք է տալիս կասկածելու, որ Վարկառուն ի վիճակի կլինի ժամանակին կատարել Բանկի նկատմամբ պարտավորությունները, կամ

գ.Վարկառուի գույքը կամ դրա մի զգալի մասը անհատույց կամ իր համար էականորեն ոչ շահավետ պայմաններով փոխանցվել են կամ հնարավոր է, որ կփոխանցվեն երրորդ անձանց, կամ

դ.Վարկառուի գույքի կամ դրա մի զգալի մասի վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել կամ հնարավոր է, որ կդրվի, կամ

ե.Դատարանը Վարկառուին ճանաչել է սնանկ (անվճարունակ) կամ նրա նկատմամբ սկսվել է սնանկության վարույթ, կամ

զ.Վարկառուն կետանցված պարտավորություններ ունի Բանկի, այլ ֆինանսական հաստատությունների (այլ բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և այլն), պետական կամ համայնքային բյուջեների հանդեպ, կամ

է.Վարկառուի ֆինանսական վիճակը վատթարացել է կամ առկա են նման միտումներ, կամ առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտորեն վկայում են, որ Վարկը սահմանված ժամկետում չի վերադարձվի (այդ թվում՝ սնանկության նախադրյալներ), կամ

ը.Վարկառուի դեմ հարուցվել են քաղաքացիական, քրեական կամ վարչական գործեր, վարչական և այլ վարույթներ, կամ

թ.Հայտնաբերվել է, որ Վարկառուն Բանկին տրամադրել է խեղաթյուրված, կեղծ, շինծու, մոլորեցնող կամ անարժանահավատ տեղեկություններ կամ փաստաթղթեր, կամ թաքցրել է Վարկը տրամադրելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ կամ Բանկին չի տեղեկացրել հանգամանքների էական փոփոխությունների մասին, կամ չի ներկայացնում/ներկայացրել Պայմանագրով նախատեսված տեղեկատվությունը (փաստաթղթեր, հաշվետվություններ) կամ խախտել է դրանց ներկայացման ժամկետը, կամ

ժ.Վարկառուն խախտել է Բանկի հետ կնքած այլ գործարքներից ծագած ֆինանսական պարտավորությունները, կամ

ժա.Ստացված տեղեկատվության համաձայն՝ Վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող աշխատավարձը կամ դրան հավասարեցված այլ վճարները այլևս չեն փոխանցվում կամ չեն փոխանցվելու Բանկում սպասարկվող Վարկառուի բանկային, այդ թվում՝ քարտային հաշվին, կամ

ժբ.Ֆինանսավորման, վերաֆինանսավորման ներկայացված վարկը չի ֆինանսավորվել կամ ֆինանսավորումը դադարեցվել է, կամ

ժգ.Բանկի գնահատմամբ Վարկառուն Վարկն օգտագործել է ոչ նպատակային, կամ

ժդ.Վարկառուն խոչընդոտել է Բանկի ներկայացուցիչների կողմից իրականացվող ստուգումներին կամ չի ապահովել Վարկի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության հնարավորությունը, կամ

ժե.Առկա են Պայմանագրով և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

2) Սույն կանոնների 19-րդ կետի 1-ին ենթակետում նշված Վարկառուի կողմից թույլ տրված ցանկացած խախտում կամ հանգամանքների որևէ փոփոխություն Բանկի համար ճանաչվում են էական:
3) Սույն կանոնների 19-րդ կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքներն ի հայտ գալու պահից Բանկն իրավունք ունի պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում պահանջել Վարկառուից, մերժել Վարկի կամ դրա մի մասի տրամադրումը, ինչպես նաև փոփոխել Վարկի տոկոսադրույքը անկախ նրանից, համապատասխան գործողությունը կատարելու պահին թույլ տրված խախտումները վերացվել են, թե ոչ:
4) Պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջի ներկայացումը, վարկի տրամադրումը մերժելը կամ տոկոսադրույքի փոփոխությունը Բանկին չի զրկում համապատասխան խախտման համար Վարկառուի նկատմամբ Պայմանագրով և/կամ սույն կանոններով նախատեսված պատասխանատվության որևէ միջոց կիրառելու իրավունքից:
5) Վարկավորման կանոնների 19-րդ կետի 1-ին ենթակետում նշված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում Բանկը, Վարկի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնելու իր իրավունքից օգտվելու դեպքում, գրավոր ծանուցում է Վարկառուին՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման (ներառյալ տոկոսների և տուժանք (տույժերի և տուգանքների վճարումը)) մասին:
6) Սույն կանոններով և/կամ Պայմանագրով Բանկի վճարման պահանջը Վարկառուի կողմից չկատարվելու կամ մասնակի կատարելու դեպքում բոլոր վճարները համարվում են ժամկետանց, իսկ պարտավորությունը՝ խախտված, և Վարկառուն դրանց չկատարման համար պատասխանատվություն է կրում Պայմանագրով և/կամ սույն կանոններով նախատեսված կարգով, պայմաններով ու չափերով:
7) Եթե Բանկը Վարկառուից պահանջում է պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում, ապա Բանկն իրավունք է ձեռք բերում անակցեպտ կարգով, առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության, գանձել պարտքի գումարը Բանկում գտնվող նրա բոլոր բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից՝ պահպանելով սույն կանոններով նախատեսված հերթականությունը, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

20. Վարկառուն գիտակցում է, որ Պայմանագրով նախատեսված լինելու դեպքում Վարկը տրամադրվելու է դրա վերադարձման պարտավորության կատարման՝ երաշխավորությամբ ապահովման պայմանով:

21. Վարկը Երաշխավորությամբ ապահովման դեպքում գործում են հետևյալ պայմանները.
   1) Երաշխավորը, ստորագրելով Օֆերտան, պարտավորվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով և դրամական միջոցներով Վարկատուի առջև համապարտ պատասխանատվություն կրել Պայմանագրով Պարտապանի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար:
   2) Եթե Երաշխավորը չի հանդիսանում և/կամ չի հայտարարում, որ հանդիսանում է Վարկառուի ընտանիքի անդամ, ապա Երաշխավորը պարտավորվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով և դրամական միջոցներով Վարկատուի առջև կրել սուբսիդիար պատասխանատվություն Պայմանագրով Վարկառուի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման համար: Նույն ընտանիքի անդամներ են համարվում ամուսինը, ծնողները, պապը, տատը, 18 տարին լրացած թոռը, 18 տարին լրացած զավակն ու նրա ամուսինը, 18 տարին լրացած քույրը, եղբայրն ու նրանց ամուսինները և 18 տարին լրացած նրանց զավակները:
   3) Երաշխավորությամբ ապահովված Վարկատուի պահանջը փաստացի բավարարման պահին ներառում է վարկի մայր գումարը, տոկոսագումարը, սպասարկման վճարները և միջնորդավճարները, տուժանքն ու վնասները, պարտքի բռնագանձման հետ կապված ծախսերը:
   4) Երաշխավորը Վարկատուի առջև պատասխանատվություն է կրում նույն ծավալով, ինչ Վարկառուն՝ ներառյալ Վարկի մայր գումարը, տոկոսագումարը, սպասարկման վճարները և միջնորդավճարները, տուժանքն ու վնասները, պարտքը բռնագանձելու կապակցությամբ դատական ծախսերը, Պայմանագրի ապահովման միջոցների բռնագանձման հետ կապված աճուրդային և այլ ծախսերի փոխհատուցումը և այլն:
   5) Երաշխավորը պարտավոր է Վարկառուի կողմից Պայմանագրով ստանձնած դրամական պարտավորությունները չկատարելու դեպքում, Վարկատուի վճարման պահանջը ստանալուց հետո 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում վճարել Վարկառուի չվճարված բոլոր գումարները:
   6) Պայմանագրով նշված պարտավորությունները չկատարելու դեպքում, Երաշխավորը իրավունք է վերապահում Բանկին, Վարկառուի կողմից Վարկատուին վճարման ենթակա բոլոր գումարները, անառարկելիորեն և անակցեպտ մարել Երաշխավորի գույքից և դրամական միջոցներից:
   7) Վարկառուի իրավունքներն ու պարտականությունները ընդհանուր իրավահաջորդության կարգով ժառանգներին (իրավահաջորդներին) փոխանցվելու դեպքում Պայմանագիրը՝ երաշխավորության մասով, համարվում է կնքված ի ապահովումն Վարկառուի ժառանգների (իրավահաջորդների) կողմից Վարկային պայմանագրով ստանձնած (իրավահաջորդներին փոխանցված) պարտավորությունների կատարման:

4. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

22. Վարկառուի կողմից Վարկը և տոկոսագումարը մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) ժամկետները կամ Պայմանագրից բխող պարտավորությունները խախտելու դեպքում հաշվարկվում են տոկոսներ և/կամ տուժանքներ՝ Պայմանագրով և/ կամ Վարկավորման պայմաններով նախատեսված չափով, մինչև ժամկետանց պարտավորության մարումը:

23. Վարկառուն պատասխանատվություն է կրում Բանկից թաքցված, Բանկին ներկայացված անարժանահավատ կամ կեղծ կամ շինծու կամ խեղաթյուրված տեղեկությունների համար՝ Վարկի գումարի 1 (մեկ) տոկոսի չափով:
24. Տուժանքի (տուգանք և տույժ) և տոկոսների վճարումը Վարկառուին չի ազատում իր ստանձնած պարտավորությունները կատարելուց, ինչպես նաև չի կարող որևէ կերպ սահմանափակել պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելու Բանկի իրավունքը:
25. Վարկառուն պատասխանատու է ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար անկախ մեղքի բացակայությունից և (կամ) անհաղթահարելի ուժի՝ արտակարգ և անկանխելի հանգամանքների ազդեցությունից: Բանկի գրավոր համաձայնությամբ Պայմանագրով սահմանված համապատասխան ժամկետները կարող են երկարաձգվել անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածով: Վարկառուն կարող է ազատվել բացառապես տույժերի և տուգանքների վճարման պարտավորությունից, սակայն ոչ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից:
26. Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Վարկառուն պարտավորվում է Բանկին փոխհատուցել բոլոր տեսակի լրացուցիչ ծախսերը, որոնք կկատարվեն Բանկի կողմից:
27. Պայմանագրով սահմանված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Պայմանագրով սահմանված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

5. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

28. Պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որը չի ենթադրում ՀՀ օրենսդրությամբ պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության հաղորդում, Բանկի կողմից մյուս կողմին ուղարկվում է Բանկի հայեցողությամբ՝ ցրիչի կամ փոստային առաքման միջոցով, էլեկտրոնային փոստի միջոցով կամ կարճ հաղորդագրությամբ (SMS)՝ համապատասխան կապի միջոցի ՝ Բանկին հայտնի վերջին տվյալներով, կամ տրամադրվում է Բանկի տարածքում կամ հրապարակում է Բանկի պաշտոնական կայքէջում:
29. ՀՀ օրենսդրությամբ սահմանված պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը, այդ թվում պարտադիր ներկայացման ենթակա քաղվածքները Վարկառուին տրամադրվում են Պայմանագրով Վարկառուի կողմից ընտրված եղանակով՝ համապատասխան կապի միջոցի՝ Բանկին հայտնի վերջին տվյալներով:
30. Վարկառուն պարտավոր է անմիջապես գրավոր անհապաղ տեղեկացնել Բանկին իր տվյալների՝ հասցեի, անձնագրային տվյալների և պայմանագրին վերաբերվող այլ փոփոխությունների մասին: Փոփոխությունների մասին Բանկին չտեղեկացնելու բոլոր իրավական հետևանքների ռիսկը կրում է Վարկառուն:
31. Կնքելով Պայմանագիրը՝ Վարկառուն տալիս է Բանկին իր համաձայնությունը՝ սպասարկման պատշաճ ապահովման և անվտանգության նկատառումներից ելնելով, իրականացնելու իրենց միջև կատարվող հեռախոսազանգերի ձայնագրություն: Տվյալ ձայնագրությունները ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

32. Կնքելով Պայմանագիրը՝ Վարկառուն տալիս է Բանկին իր համաձայնությունը՝ Բանկի տարածքում Վարկառուին սպասարկելիս իրականացնել տեսաձայնագրություններ և ձայնագրումներ: Տվյալ ձայնագրությունները (տեսաձայնագրությունները) ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

33. Պայմանագրի շուրջ ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի միջոցով:
Կողմերը, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 297-րդ 2-րդ մասով նախատեսված իրենց իրավունքից, համաձայնվում են, որպեսզի Պայմանագրից բխող բոլոր (անկախ գումարի չափից) վեճերի քննությունն իրականացվի պարզեցված վարույթի կարգով: :
Վարկառուն, ստորագրելով Վարկի Օֆերտան, հավաստիացնում է, որ տեղյակ է պարզեցված վարույթի առանձնահատկությունների մասին, իսկ սույն գլխով նախատեսված համաձայնությունը բխում է իր շահերից:
Սույն կետը գործում է, եթե կողմերի միջև ձեռք չի բերվել վեճերը արբիտրաժի միջոցով լուծելու համաձայնությունը:
34. Այն ինչ նախատեսված չէ Պայմանագրով կամ սույն կանոններով կարգավորում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:
35. Պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական Համակարգի Հաշտարարին, որը Կողմերի միջև ծագած վեճը լուծում է «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

7. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

36. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքման պահից և գործում է մինչև Պայմանագրով սահմանված կարգովպարտավորությունների ամբողջական կատարումը:
37. Սույն կանոնները հանդիսանում են Պայմանագրի բաղկացուցիչ և անբաժանելի մասը:
38. Սույն Կանոնները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում և կարող են պարբերաբար Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել, փոփոխված Կանոնները ուժի մեջ են մտնում հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում:
39. Պայմանագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կարող են կատարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ Պայմանագրով և (կամ) սույն կանոններով նախատեսված դեպքերի:
40. Սույն կանոնների պայմանների փոփոխությունների մասին Բանկը ծանուցում է Վարկառուին՝ օրենքով և Պայմանագրով սահմանված կարգով: Վարկառուն իրավունք ունի հրաժարվել նշված փոփոխություններից և լրացումներից մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ լուծելով Բանկի հետ կնքած Պայմանագիրը և ամբողջությամբ կատարելով ստանձնած պարտավորությունները: Եթե Վարկառուն մինչև փոփոխությունների ու լրացումների ուժի մեջ մտնելը չի լուծել Բանկի հետ

կնքած Պայմանագիրը և կատարել է Պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ապա կատարված փոփոխություններն ու լրացումները լրիվ և ամբողջական ծավալով տարածվում են Պայմանագրից ծագած հարաբերությունների նկատմամբ, եթե Բանկի կողմից այլ բան չի սահմանվում:

41. Պայմանագրի գործողության ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հայաստանի Հանրապետության Կենտրոնական Բանկի նորմատիվային ակտերի փոփոխությունները, որոնք կտարածվեն Պայմանագրի պայմանների վրա, պարտադիր են կողմերի համար:
42. Սույն կանոնների և Պայմանագրի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է սույն կանոններին, եթե կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ այլ բան չի որոշվել: